

ԲԵԿՅԱՆ ՁԱՎԵՆ

ՀՅՈՒՐԱՆՈՑ

*Աշխարհը հյուրանոց է, Ձիվան,
մարդիկ հյուր են...
Ձիվանի*

Դուռը միակն է, բայց՝ արտացոլված
բազում տեղերում: –

Մարդացուլն ենք մենք՝
լաբիրինթոսում հայելիների:

Պիտի որոնենք: Ու երբ գորգերին
մեր կճղակների ձայնը խլանա՝

ուրեմն այն ենք արդեն – ձեռնավոր –
ու արդեն Դուռը կարող ենք բանալ...

Մի գիշեր է սա ընդամենը, – և
մինչև լուսաբաց արթուն կմնանք:

ՊՐՈՍԵԹԵՎՍ

Մի տեսների՝
Հերմեսը,
բանբերն աստվածների,
ինչ վայնասուն է գցել...

Այդ հուրը հիմա
կլլում-արտափչում են
ֆակիրները հմուտ:

Աստվածային գիջում
/«ինչպես կրակ
ճահիճում» –
Ե. Չարենց/: